ՏԱԹԵՎ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեմա՝ Դեռահասի հոգեբանամանկավարժական բնութագիրը

Հետազոտող ուսուցիչ՝ Ալդոնա Ավագյան

Երևանի թիվ 135 հիմնական դպրոց

ԵՐԵՎԱՆ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 3
Դեռահասի հոգեբանամանկավարժական բնութագիրը 4
Ուսումնական գործունեության առանձնահատկությունները 7
Դեռահասության տարիքի ընդհանուր բնութագիրը.....11
Դեռահասի մտավոր զարգացումը.....13
Դեռահասի շփումը ընկերների հետ.....14
Բնավորության կայացումը եվ դեռահասի դաստիարակության հիմնախնդիրը 15
Դեռահասների շեշտված բնավորություն /ա.լիչկո/.....16
Եզրակացություն.....21
Օգտագործված գրականություն.....22

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Դեռահասությունը տարբեր ժամանակներում եղել է մանկավարժների, ֆիզիոլոգների և այլ մասնագետների ուշադրության կենտրոնում: Տարիքային այս փուլը հայտնի է որպես անցումային, ճգնաժամային: Կախված նրանից թե ինչպես դեռահասը կհաղթահարի անցումային այս փուլը, կարելի է կանխորոշել նրա հետագա զարգացումը: Դեռահության փուլի սահուն հաղթահարմանը նպաստում են այն սոցիալական ինստիտուտները, որոնցում ներգրավված է դեռահասը: Տարիքային այս շրջափուլի ուսումնասիրություններն բոլոր ժամանակներում էլ եղել են արդիական: Այժմ ևս արդիական է և պահանջում է լուրջ մոտեցում, քանի որ 21-րդ դարում ՏՏ ոլորտի զարգացվածությունն ու տարածվածությունն դեռահասության շրջանում գտնվող ցանկացած մարդու համար լուրջ սպառնալիք է, եթե չկա համապատասխան վերահսկողություն: Երկար տարիներ շփվելով դեռահասների հետ, դժվար չէ հասկանալ, թե ինչ մեծ ջանքեր են պահանջվում ուսուցչից նրանց որևէ ուսումնական գործընթացի մասնակից դարձնելու, համապատասխան մթնոլորտ ստեղծել, որպեսզի մեր կողքին ունենանք բարոյական և գեղագիտական արժեքներով հարուստ կրթված, բարի և գեղեցիկ զգացմունքներով օժտված անհատ: Կարծում եմ՝ այս բոլորը ստեղծելու համար պետք է դառնալ հոգեբան, մարդ, ով ճիշտ կընկալի դեռահասի հոգին, էությունը, կհասկանա և կգնահատի նրա ակնկալիքներն ու ցանկությունները: Երաժշտությունը շատ մոտ է դեռահասի հոգուն, զգացողություններին: Երաժշտությամբ նրանք ապրում են, երազում և երջանկանում: Պատահական չէ, որ դասական երաժշտություն լսելիս (Հայդն, Մոցարտ, Բեթհովեն, Կոմիտաս, Խաչատրյան) հիվանդ մարդիկ անգամ առողջանում են, կազդուրվում:

Երաժշտության շնորհիվ առաջացած հոգեվիճակը դեռահասին հաճելի է, սիրելի է, հուզում է, օգնում է և բուժում, և շատ վստահ դարձնում: Մեզանից՝ նրանց կրթողներից, պահանջվում է սովորողներին օգնել, որ կայանան որպես անձ, ապրեն անհոգ, երևակայեն, ճաշակ ձևավորեն, լինեն բարի, հոգատար, տեսնեն գեղեցիկը կյանքում և արարեն: Իսկ այս հարցում դեռահասին պետք է օգնենք մենք:

ԴԵՌԱՀԱՍԻ ՀՈԳԵԲԱՆԱՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Դեռահասին բնորոշ են մի շարք առանձնահատկություններ.

- սեփական անձի հասունացումը նկատել տալու պահանջ,
- երկյուղ մանկական վարքագիծ դրսևորելուց,
- միայն հասուն մարդուն վայել գործով զբաղվելու տենչ,
- ցանկացած գործունեության մեջ մասնակից լինելու բուռն ցանկություն,
- անելանելի վիճակներում անգամ հաղթանակ տանելու բուռն ցանկություն,
- երազկոտության և ֆանտազիաներով տարվելու հակում,
- սեփական իրական նկարագրի և որակների մասին պատմելու ցանկություն,
- ինչ-որ գործով զբաղվելու ցանկության արտահայտում,
- մարդկային հարաբերությունների մասին պատկերացումների ցուցադրական ներկայացում մեծահասակների վարքի քննարկման օրինակով:

Միջին դպրոցի սանն արդեն որակապես տարբերվում է տարրական դպրոցի աշակերտից: Կրտսեր դպրոցականը իր բնույթով խիստ տպավորվող և ներշնչվող է զարգացած չէ նրա ինքնուրույնությունը:

Դեռահասության տարիքում, ընդհակառակը, անձի ինքնուրույնությունը վառ դրսևորում է ձեռք բերում: Այս տարիքում սովորողները ինքնուրույն գործունեություն են ծավալում և անընդհատ ձգտում են ընդարձակելու դրա սահմանները: Սրանով նրանք ուզում են հատուկ ընդգծել և առիթ-անառիթ շեշտել, որ իրենք արդեն մեծ են, հասունացել են, այլևս երեխա չեն: Սա նրանց ամենախոցելի տեղն է և ամենագլխավոր նպատակադրումը: Բացի դրանից դեռահասի ամենանվիրական ցանկությունն այն է, որ մասնակից լինի մեծահասակների կյանքին և գործունեությանը: Իսկ դեպի մեծահասակ տանող ճանապարհն անցնում է հասուն մարդու կյանքի արտաքին կողմերի նմանակումով ,արտաքին տեսք, հագուստ արդուզարդ, պահվածք, զվարճություններ, խոսվածք: Արտաքին վարքի ընդօրինակումը հենց իրեն,դեռահասին է պետք: Նրան մեծ լինելու հավաստիքներ են պետք անձամբ իր համար ինքն իր, ինչպես նաև շրջապատի աչքին մեծ երևալուհամար: Այսպիսի հասունացումը դեռ միայն նմանակում է :

Տեսնելով, որ մեծահասակների հասարակության մեջ դեռ տեղ չունի դեռահասը

իր տեղը որոնում է մանկական կոլեկտիվում, ընկերների հետ համագործակցության ձևով: Դպրոցում դեռահասի համար ամենակարևորը դառնում է ընկերների հետ հաղորդակցվելու ուրախությունը, գործում է անդավաճան ընկերության և հասկացված լինելու սկզբունքը:

Հաղորդակցական գործունեությունը շատ կարևոր է անհատականության ձևավորման համար: Այս գործունեության ընթացքում ձևավորվում է ինքնաճանաչությունը:

Ինքնազարգացման, ինքնաճանաչողության ձգտում և ընկերների հետհամագոր-ծակցություն: Սա հիմնական դպրոցի սանի գործունեության ամենաբնորոշ ձևերն են:
Այս տարիքին բնորոշ են հետևյալ կարևոր դրսևորումները /Լ.Ս.Վիգոտսկի/:

- եսակենտրոն- դեռահասի ուշադրությունը և հետաքրքրությունը բևեռվում են սեփական անձի վրա,
- տարածական-հետաքրքրությունը բևեռում է նաև իրենից հեռու գտնվող, համամարդկային, հաճախ տիեզերական խնդիրների լուծումները որոնելու վրա.սբ ռանք հաճախ հեշտ լուծելի են թվում ,քան իր անձին վերաբերվող կամ ընթացիկ խնդիրները,
- ուժային-սեփական կամքին հակառակ գրեթե ոչինչ չի անում,գործ չի ձեռնարկում,
- ռոմանտիկայի անհատի, համարձակ քայլերի,արկածների և հերոսության ձգտում:

Լ.Ս.Վիգոտսկին և Ժ.Պիաժեն հատուկ ուշադրություն են դարձրել դեռահասների մտածողության յուրահատկություններին: Այս տարիքում գլխավորը հասկացություն-ների ձևավորումը և դրանց տիրապետումն է: Տեղի է ունենում իրականության, այլ մարդկանց և ինքն իրեն հասկանալու բուռն ցանկություն. ահա թե ինչի է հանգեցնում հասկացություններով մտածելը,- գրում է Վիգոտսկին:

Այս տարիքում կարևոր փոփոխություններ են տեղի ունենում նաև երևակայության ոլորտում: Վերացական մտածողության ազդեցությամբ երևակայությունն անցնում է ֆանտազիայի ոլորտ: Դեռահասի ֆանտազիան սովորաբար դեպի ներս է ուղղված և շրջապատողներից թաքնված է: Այդ է պատճառը,

որ մտածողությունը անհատականացված և սուբյեկտիվ է: Դեռահասն իր ֆանտազիաները թաքցնում է որպես սրբազան գաղտնիք և առավել հաճույքով խոստովանում է իր վատ արարքները, քան բացահայտում է իր գաղտնիքները:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Դեռահասի ուսումնական գործունեության մեջ բազմաթիվ են դժվարություններն ու հակասությունները, սակայն կան նաև որոշակի առավելություններ, որոնց վրա էլ կարող է և պիտի հենվի մանկավարժը: Մանկավարժ-հոգեբանների կարծիքով դեռահասն աչքի է ընկնում ուսումնական նյութի ընկալման բարձր որակներով: Դեռահասի ամենամեծ արժանիքը ուսումնական բազմատեսակ գործընթացներին մասնակից լինելու պատրաստակամությունն է, քանի որ սրանով նա հենց ինքն իր աչքում է դառնում հասուն մարդ:

Բացի սրանից դեռահասին հրապուրում է դասի ընթացքում ինքնուրույն դրսևորելու հնարավորությունը, ինչպես նաև դպրոցի պատերից դուրս ընդհանրապես ճանաչողական գործունեության ծավալումը: Սակայն դեռահասն իր պատրաստակամությունը չի կարողանում գործնականում կիրառել, քանի որ չի տիրապետում ուսումնական գործունեության բազմազան և նոր եղանակների:

Ուսուցչի խնդիրն է դեռահասին սովորեցնել ուսումնառության այդ նոր եղանակներն ու ձևերը և թույլ չտալ, որ ուսման նկատմամբ հետաքրքրությունը հանգչի:

Մանկավարժը մշտապես ականատես է, թե դեռահասն ինչ բուռն ոգևորություն է հանդես բերում ուսումնական նոր առարկայի հանդեպ, բայց նաև որքան արագ է նա հիասթափվում դրանից:

Հաճախ դեռահասը կորցնում է հետաքրքրությունը ուսման և ընդհանրապես դպրոցի հանդեպ. դրսևորվում է ներքին հեռացում դպրոցից: Հեռացումն արտահայտվում է նրանով, որ դպրոցը դադարում է նրա համար հոգևոր կենտրոն լինելուց: Սրա հիմնական պատճառն այն է, որ ուսումնական գործնեության ընթացքում չի բավարարում սովորողի ինքնահաստատման պահանջը: Իսկ, երբ սովորողները հասկանում են ուսումնառության գլխավոր դրդապատճառները, ապա կարողանում են ինքնուրույնաբար ուսումնական խնդիրներ որոշել, դրանց լուծման առավել իրատեսական ուղիներ ընտրել, հսկել և գնահատել սեփական աշխատանքը:

Դեռահասների ուսուցման արդյունավետության բարձրացման միջոցներից մեկը ուսումնական դրդապատճառների նպատակաուղղված ձևավորումն է: Դրանք

անմիջականորեն կապված են տարիքային խմբին հատուկ գերիշխող պահանջմունքների բավարարման հետ: Այդ պահանջմունքներից առաջինը ճանաչողությունն է, որի բավարարման արդյունքում ձևավորվում են կայուն հետաքրքրություններ և ուսումնական առարկաների նկատմամբ դրական վերաբերմունք: Դեռահասներին հրապուրում է գիտելիքները հարստացնելու, ընդարձակելու ուսուցանող երևույթների մեջ թափանցելու, դրանց պատճառահետևան-քային կապերը բացահայտելու հնարավորությունը:

Դեռահասի մտավոր հասունությունը դրսևորվում է իսկապես ինչ-որ բան իմանալու և կարողանալու ձգտումով: Հենց այս բուռն ցանկությունն էլ խթանում է սանի ճանաչողական գործունեությունը, ընդգծում է նրա ինքնուրույն աշխատանքը: Ուսումը ձեռք է բերում անձնական իմաստ և վերաճում է ինքնակրթության : Այստեղ է, որ ուսուցիչը պիտի կարողանա ուսումնական գործունեությունը դարձնել իմացական ուրախության աղբյուր:

Հետազոտական գործունեությունը նրանց մեծ բավականություն է պատճառում: Նրանք ուզում են ինքնուրույնաբար հասնել ինչ-որ բանի, գյուտեր և բացահայտումներ անել: Ճանաչողական պահաջմունքները չբավարարելու դեպքում դեռեհասների մոտ նկատվում են ձանձրույթի, ընկճվածության, անտարբերության դրսևորումներ, իսկ երբեմն էլ բացասական վերաբերմունք ընդհանրապես ուսման կամ անհետաքրքիր առարկաների հանդեպ: Ընդ որում նրանց համար հավասարապես կարևոր են ինչպես ուսումնական նյութի բովանդակությունը, այդպես էլ այդ նյութից գիտելիք քաղելու գործընթացը, միջոցները, եղանակները: Հետքարքիր են այն դասերը, որոնց ընթացքում սովորողները գիտելիքներ են ձեռք բերում ոչ միայն դասագրքից, այլև օժանդակ ուրիշ միջոցներից: Իսկ եթե գիտելիքի միակ աղբյուրը դասագրքի գրվածն է, ապա սա դառնում է անհետաքրքիր և միօրինակ:

Ճանաչողական հետաքրքրությունների հետ միասին դրական վերաբերմունք կարող է ծնվել գիտելիքի ձեռք բերման անհրաժեշտությունը: Դեռահասի համար շատ կարևոր է հասկանալ և իմաստավորել դրանց կենսական նշանակությունը, ինչպես նաև իր անձի զարգացման հարցում ունեցած կարևորությունը: Սա ժամանակակից դեռահասի ինքնագիտակցության զարգացման մասին է վկայում: Շատ առարկաներ

նրան դուր են գալիս այն բանի շնորհիվ, որ հնարավորություն են ընձեռում ոչ միայն շատ բան գիտենալ, այլև շատ բան կարողանալ, լինել բարեկիրթ, բազմակողմանիորեն զարգացած մարդ: Պետք է քաջալերել դեռահասին և ամրապնդել այն մտայնությունը, թե կրթված և ուսյալ մարդը իսկապես մեծ օգուտ կարող է բերել հասարակությանը: Համոզմունքները և հետաքրքրությունները մեկտեղելով ստեղծում են հուզական: երանգավորում ունեցող մթնոլորտ, որն էլ հնարավորություն է տալիս գործուն մասնակցություն ունենալու ուսումնառության գործընթացին: Եթե դեռահասը գիտելիքի կենսական նշանակությունը չի նկատում և չի ընկալում,կարող են ձևավորվել բացասական համոզմունքներ հետևաբար նաև բացասական վերաբեր-մունք ուսումնական առարկաների հանդեպ.

Օրինակ, որոշ աշակերտներ երաժշտության տեսական մասը չեն սովորում, քանի որ համարում են, որ իրենց դա պետք չէ: Ուսման նկատմամբ դրսևորվող բացասական վերաբերմունքը պայմանավորված է նաև որոշակի առարկաների ուսումնասիրության ընթացքում գրանցվող սեփական անհաջողություններով: Անհաջողությունը ծնում է բացասական հույզեր, ինչպես նաև խրթին առաջադրանքի կատարումից հրաժարում: Իսկ եթե անհաջողությունը շարունակական է դառնում, ապա դեռահասը բացասաբար է վերաբերվում կամ էլ ուղղակի մերժում է տվյալ առարկան:

Այնինչ գրանցվող հաջողությունը հաճելի զգացողության հիմք է դառնում ,որն էլ ապահովում է դրական հույզերի առկայությունը ուսման հանդեպ: Անհաջողության հանդիպելու կամ պարտվելու վախը հաճախ երեխային ստիպում է, որ խուսափի դասին ներկայանալուց, պատրվակներ որոնի դպրոց չգնալու համար :

Դեռահասի դրական հուզական ուղղվածությունը պայմանավորված է մեծահասակների գնահատականով, որով չափում են նրա ուսումնական գործունեությունը: Գնահատումը մի քանի կողմ ունի .մի դեպքում սա հնարավորություն է տալիս դեռահասին կատարելու իր պարտականությունը, արժանապատիվ տեղ գրավելու դասընկերների շարքում, մյուս կողմից էլ արժանանալու ուսուցիչների և ծնողների հարգանքին: Իսկ հաճախ էլ բարձր գնահատականը խթանում է ուսումնական գործընթացում հաջողությունների հասնելու

ձգտումը և դրանով իսկ որոշակի վստահություն ձեռք բերելու սեփական մտավոր կարողությունների և հնարավորությունների առումով: Սա պայմանավորված է սեփական անհատականությունը գիտակցելու ,իր անձի ուժեղ և թույլ կողմերը գնահատելու այս տարիքին հատուկ գլխավոր պահանջմունքի հետ: Այդ է պատճառը ,որ ուղղությամբ և ուժեղացնում են մեկմեկու: Հակառակ դեպքում կարող են ծագել ինչպես ներքին այնպես էլ արտաքին դեռահասի համար խիստ կարևոր է ինչպես սեփական անձին տված ուրիշների գնահատականը, այնպես էլ ինքնագնահատումը: Այս վերջինը դեռահասության տարիքում գերակա դեր ունի: Դեռահասի դրական հուզականության ձևավորման համար շատ կարևոր է, որ ուրիշների տված գնահատականը համապատասխանի ինքնագնահատականին: Սա հզոր դրդապատճառ է. արտաքին գնահատումը և ինքնագնահատումը գործում են միևնույն հակասություններ:Ուսուցիչը պիտի իմանա, թե ինչ պայմաններ են պետք դրդապատճառների համար: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ դեռահասի ուսման նկատմամբ դրսևորվող վերաբերմունքը նախ և առաջ պայմանավորված է ուսուցչի աշխատանքի որակով և սովորողների նկատմամբ դրսևորած վերաբերմունքով:

Դեռահասները գնահատում են գիտակ և խիստ, բայց արդարամիտ ու նրբամիտ տակտով օժտված ուսուցիչներին ,որոնք կարողանում են հետաքրքիր ու հասկանալի ձևով բացատրել նյութը ,ընտրել աշխատանքի ճիշտ տեմպ, նրանում ներգրավել աշակերտներին և այն առավել չափով արդյունավետ դարձնել բոլորի և յուրաքանչյուրի համար:

Յուրաքանչյուր նոր առարկա շարժում է դեռահասների հետաքրքրությունը: Ուսուցչից է կախված այդ հետաքրքրության պահպանումն ու զարգացումը: Ուսուցումն անձնային իմաստ է ստանում և ձևափոխվում է ինքնակրթության: Դպրոցում սովորելու անհրաժեշտության լոկ վերացական ըմբռնումը դեռահասի համար աշխատանքի բավարար դրդիչ ուժ չէ:

ԴԵՌԱՀԱՍՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Դեռահասության փուլի սահմանները ընդգրկում են 11-12 տարեկանից մինչև 14-15 տարեկանը: Մանկությունից հասունությունը կատարվող անցումն այդ փուլում տեղի ունեցող զարգացման բոլոր ֆիզիկական, մտավոր, բարոյական և սոցիալական կողմերի հիմնական բովանդակությունն է և առանձնահատկությունը: Դեռահասի անձնավորության զարգացման առաջին գործոնը հենց իր հասարակական մեծ ակտիվությունն է:Սրա նպատակն է վարքի որոշակի նմուշների և արժեքների յուրացումը, չափահասների ու ընկերների հետ հարաբերությունների հաստատումը: Այդ ակտիվության օբյեկտ է նաև ինքը դեռահասը: Նա ծրագրավորում է իր անձն ու ապագան և փորձ է կատարում իրականացնել իր մտադրությունները,նպատակներն ու խնդիրները: Դեռահասության փուլը կարևոր է նրանով, որ այստեղ դրվում է անձի բարոյական և սոցիալական դիրքորոշումների հիմքը և ուրվագծվում է դրանց հետագա զարգացման հիմնական ուղղությունը: Դեռահասի անձի կենտրոնական ու յուրահատուկ նորագոյացությունը նրանում այն պատկերացման առաջացումն է, որ ինքն արդեն երեխա չէ: Դրա գործնական դրսևորումը չափահաս լինելու և այդպիսին համարվելու ձգտումն է: Սակայն մի շարք էական հանգամանքներ նպաստում են նախկին հարաբերությունների հաստատմանը : Դրանցից են՝

- Դեռահասի հասարակական դիրքի անփոփոխությունը, նա դպրոցական էր և մնում է այդպիսին:
- Նա նյութական բացարձակ կախվածության մեջ է գտնվում իր ծնողներից,որոնք ուսուցիչների հետ միասին հանդես են գալիս որպեսդաստիարակներ:
- Չափահասները պահպանում են երեխային ուղղություն տալու և վերահսկելու սովորությունը:
- Դեռահասի արտաքինն ու վարքագիծը հատկապես առաջին շրջանում պահպանում են մանկական գծեր և նա դեռևս չի կարողանում ինքնուրույնաբար գործել:

Դեռահասության հիմնախնդիրը բոլոր ժամանակներում էլ գտնվել է անվանի մանկավարժների, հոգեբանների, իրավաբանների և ողջ հասարակության ուշադրության կենտրոնում: Սակայն դեռահասության և հատկապես դժվար դեռահասների պրոբլեմները ծագել են այն ժամանակ, երբ հասարակությունը նրանց առանձնացրել է, որպես մարդկանց հատուկ խումբ, ովքեր ունեն իրենց հատուկ իրավունքները:

Ըստ Էրիկ Էրիկսոնի անձի զարգացումը տեղի է ունենում մարմնական զարգացման, գիտակցական ես ի և սոցիալական զարգացվածության միահյուսվածությամբ: Ըստ նրա տարիքային շրջաբաժանման դեռահասության տարիքը համընկնում է կյանքի հինգերորդ փուլի հետ և այստեղ դիտվում է ճգնաժամ: Դեռահասության փուլի սկզբում անհատը դեռ ապրում է ծնողների հետ և ըստ էության երեխա է, ֆինանսական և հուզական տեսանկյունից կախված է ծնողներից: Նրա խաղային և ուսումնական գործունեությունը գտնվում է մեծերի վերահսկողության տակ: Սակայն այս փուլի վերջում նա դառնում է բավականաչափ ազատ և ինքնուրույն: Նա հոգեբանորեն պատրաստ է ինքնուրույն կյանք վարելու: Նա այդ ժամանակ ավելի մեծ ժամանակը անցկացնում է դրսում հասակակիցների շրջապատում: Նա մտնումէ դեռահասների խմբերի մեջ որոնց ազդեցությունը դեռահասի վրա ակնհայտ է:

Էրիկսոնը նշում է ,որ դեռահասների խմբերի ձևավորումը, նմանօրինակ հագուստը, շարժումները ու միմիկան պաշտպանի դերում են հանդես գալիս և նրանց պաշտպանում են բարդ, խճճված իդենտիկությունից: Դեռահասներն ամբողջովինչեն պատկերացնում, թե իրենք ով են, ինչ են իրենցից ներկայացնում և հասակակիցներին

հագուստի, շարժումների մեջ նմանակելը նրանց որոշակի կայունություն, անվտանգության զգացում են ներշնչում: Բացի այդ նրանց զարդեղենը, սանրվածքը, նախընտրած երաժշտությունը սիմվոլիկ ձևով որոշակի դիստանցիա են ապահովում մեծահասակների հետ ունեցած հարաբերություններում: Նրանք ձգտում են հեռու լինել այն ամենից, ինչը կապված է մեծահասակների աշխարհի հետ: Ըստ Էրիկսոնի նման խմբի անդամ դառնալու գայթակղությունը բացատրվում է իդենտիկության փնտրտուքով: Հասակակիցները նրանից կոնֆորմիզմ են պահանջում և վարքում և հագուստներում: Նա գտնում էր ,որ դեռահասները ու պատանիները շատ հաճախ լինում են կամակոր, եսակենտրոն, խռովարար:Նրանք ձգտում են ինքնուրույնության, սակայն միևնույն ժամանակ զգում են ծնողների պաշտպանության կարիքը: Անձն տարիքային այս փուլում ձգտում է ունենալ միասնական, ինտեգրված Ես-ի զգացումը, որի բաղադրիչներն են՝

ա) Ինքնուրույն անձ լինելու ցանկությունը:

բ) Սեփական հասուն սեռականության ընդունումը Գ Որոշակի հիմնական համոզմունքներ ունենալը:

դ) Հիմնական սոցիալական և մասնագիտական դերերի ընդունումը:

ԴԵՌԱՀԱՍԻ ՄՏԱՎՈՐ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Իրականության վերլուծության գործում դեռահասի կարևորագույն ձեռքբերումը իմացական խնդիրներ լուծելիսվարկածներ առաջ քաշելու կարողությունն է :

Ենթադրություններ կատարելու ընդունակությունը գիտական մտածողության յուրահատուկ միջոցներից մեկն է: Վերահսկող ու կառավարվող է դառնում նաև խոսքը, ընդ որում անձնային կարևորություն ներկայացնող որոշ իրադրություններում դեռահասները ձգտում են ճիշտ ու գեղեցիկ խոսել: Հենց դեռահասության տարիքում է զարգանում ուշադրությունը վերացական և տրամաբանորեն կազմակերպված նյութի վրա տևականորեն կենտրոնացնելու ընդունակությունը: Բայց այդ զարգացումը տեղի է ունենում աստիճանաբար և տարբեր դեռահասների մոտ տարբեր չափով : Դեռահասության տարիքը զարգացման այն փուլն է, որտեղ ապագայի մասին

մանկական երազանքները հերթափոխվում են սեփական հնարավորություններն ու կյանքի հանգամանքներն հաշվի առնող խորհրդածություններով:

Դեռահասի և մեծահասակների կոնֆլիկտների պատճառները-Մեծերի և դեռահասների շփման պրոցեսի յուրահատուկ դժվարությունները կարող են բացակայել,եթե նրանց փոխհարաբերությունները կազմակերպվում են որպես չափահասների բնորոշ հարաբերություններ և ունեն բարեկամական բնույթ կամ բովանդակալից համագործակցության ձև, որին հատուկ են փոխադարձ հարգանքը, փոխօգնությունն ու վստահությունը:

Տարբեր գործերում և զբաղմունքներում նա հանդես է գալիս չափահասի օգնականի և ընկերոջ դերերում, իսկ վերջինս դառնում է նրա բարեկամն ու ընդօրինակման օբյեկտը: Հենց այդպիսի հարաբերություններն են ցանկալի դեռահասին և նպաստավոր նրա դաստիարակության գործի համար:

Հարազատ մարդկանց բարեկեցությունը և նրանց մասին հոգ տանելը դեռահասի համար դառնում են չափազանց կարևոր ու կենսական առժեքի նշանակություն են ստանում: Դեռահասության տարիքի սկիզբը այդպիսի ունակությունների տիրապետելու համար ամենաբարենպաստ ժամանակաշրջանն է: Այս նպատակով դեռահասին, որպես օգնականի, պետք է մասնակից դարձնել մեծերի համապատասխան պարապմունքներին:

ԴԵՌԱՀԱՍԻ ՇՓՈՒՄԸ ԸՆԿԵՐՆԵՐԻ ՀԵՏ

Հենց դեռահասության շրջանում են ձևավորվում այն բազմատեսակ և ըստ մտերմության աստիճանի միմյանցից զգալիորեն տարբերվող հարաբերությունները որոնք հստակորեն տարբերակվում են դեռահասի կողմից: Հասակակիցների հետ ունեցած հարաբերությունները դեռահասի համար դառնում են խիստ անձնային և այստեղ նա գործում է ինքնուրույնաբար: Նա գտնում է, որ ունի այդպիսի իրավունք, պաշտպանում է այդ իրավունքը և հենց այդ պատճառով էլ մեծերի աննրբանկատ նիջամտությունը բողոքներ ու վիրավորանք է առաջացնում:

Դեռահասի մոտ հստակորեն դրսևորվում են միմյանց հետ փոխկապակցված 2

ձգտումներ: Առաջինն իր հասակակիցների հետ շփվելու և համատեղ գործունեություն կատարելու ձգտումն է, կոլեկտիվ կյանքով ապրելու, մոտ ընկերներ բարեկամ ունենալու ցանկությունը: Մյուս, ոչ պակաս ուժեղ ցանկությունը ընկերների կողմից ընդունված, գնահատված և հարգված լինելու պահանջմունքն է:

Կատարվում են մտերիմ ընկերոջ որոնումներ: Փորձարկման է ենթարկվում շփման պրոցեսի գրավչությունը, ինչպես նաև համատեղելիությունն իր երկու ձևերով,ըստ հետաքրքրությունների և ըստ անձնային հարաբերությունների բնույթից ունեցած բավարարվածության: Այդ պատճառով բարեկամական հարաբերությունների նկատմամբ, դրանք պետք է հիմնված լինեն փոխըմբռնման ու անկեղծության նրբազգացության և կարեկցողության, գաղտնապահության վրա:

ԲՆԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿԱՅԱՑՈՒՄԸ ԵՎ ԴԵՌԱՀԱՍԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ

Իմանալ երեխայի բնավորությունը, նշանակում է իմանալ այն գծերի ամբողջությունը որը ընկած է նրա վարքի հիմքում: Բնավորության մեջ ամրագրվում են վարքի դրդապատճառները, մարդու վերաբերմունքը սոցիալական միջավայրին և իր անձին: Բնավորության զգայական հիմքը դա խառնվածքն է,որով որոշվում է մարդու վարքի դինամիկ առանձնահատկությունները, ռեակցիայի ուժը ,գործունեության արագությունը, վարքի ճկունությունը, հոգեկան գործընթացների ինտենսիվությունը: Ըստ Պավլովի խառնվածքի հիմքում ընկած է նյարդային համակարգի տիպերը, որոնց համահարաբերակցությունից էլ առաջանում են խառնվածքի չորս տիպեր: Չնայած խառնվածքը ամբողջությամբ պայմանավորված է ժառանգականությամբ, սակայն այն նույնպես կարող է փոխվել գործունեության նպատակների փոփոխությունից, տարիքից և այլն: Բնավորությունը չնայած սերտորեն կապված է խառնվածքի հետ, սակայն այն ավելի ճկուն համակարգ է, որի մեջ միավորվում են բազմաթիվ գծեր և որոնք կազմում են բնավորության կառուցվածքներ: Բնավորության կառուցվածքը ձևավորվում է միայն դեռահասության շրջանում: Կենսաբանական և սոցիալական փոփոխությունները բերում են նրան,որ դեռահասի մոտ կարող են առաջանալ

բնավորության շեշտվածություն, ընդ որում շեշտվածությունը դրսևորվում է միայն դժվար իրադրություններում: Օրինակ չշփվող երեխայի համար դժվար իրադրությունը նոր խմբի մեջ ընդգրկվելն է, իսկ շփվող դեռահասի համար դժվար է միայնակ մնալը և խիստ ռեժիմը:Բնավորության շեշտվածությունը նորմայի ծայրահեղ դրսևորումն է, որը դեռահասության տարիքումկարող է առաջացնել դժվար դաստիարակվող դեռահասի և շեղված վարքի խնդիրներ: Բնավորության շեշտվածության համար արդյունավետ մեթոդիկա է Լիչկոյի բնավորության ախտորոշման հարցարանը, ըստ որի գոյություն ունեն բնավորության շեշտվածության տասնմեկ տիպեր: Բնավորության շեշտվածության պատճառը կարող է լինել ժառանգական, սոցիալական,այսինքն սխալ դաստիարակության և երեխա-մեծահասակ ոչ ներդաշնակ հարաբերությունների հետևանքով: Դժվար դաստիարակվող դեռահասներին կարելի է միավորել մի շարք խմբերում:

Ա. Ցինկներ, այսպիսի դեռահասներն ունեն կայուն անբարոյական համոզմունքներ և նրանք իրենց վարքում անընդհատ հակադրվում են սոցիալական նորմերին: Սրանք հիմնականում հանցագործ խմբավուրումների լիդերներ են:

Բ. Հուզական անկայուններ.այսպիսի դեռահասները գիտեն թե ինչն է լավը, ինչն է վատը, սակայն հեշտությամբ ընկնում են ազդեցության տակ, ներշնչվող են, ընդօրինակում են վատերին:

Գ. Ուժեղ պահանջմունքներ ունեցող դեռահասներ, սրանք իրենց պահանջմունքների գերին է: Դրանք բավարարելու համար խախտում են նորմերը, այնուհետև ունենում են մեղավորության և խղճի խայթի զգացողություն:

Դ.Աֆֆեկտիվ դեռահասներ այսպիսի դեռահասները ուժեղ հուզական հակազդումներ են ունենում և անընդհատ մտածում են, որ իրենց հետ անարդարացի են վերաբերվում, ծաղրում, խաղում են իրենց արժանապատվության հետ: Նրանք ագրեսիվ են և կոնֆլիկտային:

ԴԵՌԱՀԱՍՆԵՐԻ ՇԵՇՏՎԱԾ ԲՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ /Ա.ԼԻՉԿՈ/

1. *Գիպերտիմիկ տիպ-* շփվող, շատախոս աշխույժ, աղմկոտ:Առաջին դասարանում

անկարգապահ, շուտ շեղվում է ուշադրությունը, այդ պատճառով չնայած իր ընդունակություններին սովորում է անկայուն հինգից մինչև երկու: Դեռահասության շրջանում ունենում է բարձր տրամադրություն և ակտիվություն: Խմբում լինում են լիդերներ, նախաձեռնող են: Ամեն մի նորույթի հանդեպ մեծ հետաքրքրություն են ցուցաբերում, սակայն հետևողական չեն, հաճախ գործը չեն հասցնում իր ավարտին: Հեշտությամբ շփվելով տարբեր մարդանց հետ կարող են ընկնել հակասոցիալական խմբերի ազդեցության տակ: Չեն տանում միայնակությունը և մեծերի խիստ վերահսկողությունը: Պայքարում են ինքնուրույնության համար, կարող են առանց զգուշացնելու տանից գնալ: Բախումներ են ունենում ծնողների և ուսուցիչների հետ:

2. *Ցիկլոիդ տիպ-* մանկության փուլում չեն տարբերվում իրենց հասակակիցներից և նույնիսկ նման են Գիպերտիմիկներին: Դեռահասության շրջանում նկատվում է տրամադրության երկարատև անկում,ճնշվածություն: Դժվարանում է սովորել, աղմկոտ խմբերը այլևս չեն գրավում, տանից չեն ուզում դուրս գալ: 1-2 շաբաթից նորից սկսվում է ակտիվությունը վերականգնվել, վատ են տանեումմիայնությունը, միապաղաղ կյանքը: Շատ խորը ապրումներ են ունենում չնչին ուսումնական անհաջողություններից: Զգայուն են դառնում դիտողությունների, մեղադրանքների նկատմամբ, որն ուժեղացնում է դեպրեսիվ վիճակը:

3. *Լաբիլ տիպ-* բնորոշ է տրամադրության ծայրահեղ փոփոխությանը: Տրամադրությունը կախված է ինքնազգացողությունից, քունը, ախորժակը, աշխատունակությունը, շփվելու ցանկությունը: Վատ տրամադրության ժամանակ ապագան թվում է գորշ, իսկ անցյալը, սխալների, անհաջողությունների, վատ մարդկանց մի շղթա և հակառակը: Լաբիլ դեռահասներին բնորոշ են խորը զգացմունքները, կապվածությունը: Նրանք բարձր են գնահատում բարի վերաբերմունքը, հոգատարությունը: Սիրող հարազատների հետ նրանց կապում է հուզական մտերմությունը, չնայած ակնթարթային բախումների: Նվիրված ապրումակցող ընկերներ են: Ծանր ապրումներ են ունենում մեղադրանք-ներից, դիտողություններից: Ամենադժվարը մտերիմներից բաժանվելն է կամ նրանց կորուստը:Այս դեպքում կարող են առաջանալ նևրոզներ, դեպրեսիաներ:

4. *Աստենիկ-նևրոտիկ տիպ* – բնորոշ գծերն են չափից շուտ հոգնածությունը, գրգռված

վիճակը: Շուտ հոգնում են մտավոր աշխատանքից, որը ազդում է ուսման վրա: Շատ զգայուն են մարմնական զգայությունների հանդեպ ,սիրում են բուժվել, հոգ են տանում իրենց առողջության մասին: Սրա հիման վրա կարող են առաջանալ նևրոզներ:

5. *Մենզետիվ տիպ* – շատ զգայուն են, մանկությունից ամաչկոտ, վախկոտ, լռող: Սրանք տնային երեխաներ են: Դպրոցը սկզբում նրանց վախեցնում է իր աղմուկով, դասամիջոցների կռիվներով, բայց այնուամենայնիվ հարմարվում են դասարանին: Սովորում են նորմալ, վախենում են ստուգողականներից, քննություններից և երբ կանչում են գրատախտակի մոտ: Նրանց թույլ տեղը դա շրջապատի վերաբերմունքն է: Շատ ծանր են տանում, երբ նրանց ծաղրում են կամ կասկածում են, երբ արժանապատվությունը ոտնահարում են: Շատ շուտ ձևավորվում է պատասխանատվության զգացումը, վարքի կանոնները, բարոյական նորմերը, հոգևոր արժեքները: Իրենց մեջ տեսնում են շատ թերություններ, փորձում են պայքարել դրանց դեմ կամ թաքցնել: Հարազատների հետ շատ կապված են, ենթարկվում են նրանց խնամքին: Դիտողությունները և պատիժները առաջացնում են ոչ թե հակառակվելու ցանկություն, այլ խղճի խայթ, արցունքներ, հուսահատություն: Հասակակիցները վախեցնում են իրենց կոպտությամբ, ցինիզմով, դաժանությամբ: Նրանք չեն մերժում դեռահասության շրջապատը, բայց նախընտրում են մեկ մտերիմ ընկեր ունենալ: Նրանց բնորոշ է ռոմանտիկ սիրահարվածությունը: Շեղված վարքի ոչ մի տեսակ նրանց բնորոշ չէ և եթե դրսևորում է ագրեսիվ վարք, ապա նշանակում է, որ նա խորապես վիրավորված է: Այս դեպքում հնարավոր են դեպրեսիաներ:

6. *Պսիխաստենիկ տիպ-* Այս տիպը ձևավորվում է այնպիսի դաստիարակության պայմաններում, երբ ներկայացնում են բարձր բարոյական պատասխանատվության պահանջներ: Երեխան սկսում է վախենալ չարդարացնել ծնողների բարձր սպասումները: Այս բնավորության դեպքում ճգնաժամային է լինում տարրական դասարանները: Դեռահասության շրջանում դառնում են անհամարձակ տագ-նապային, սիրում են զբաղվել ինքնավերլուծությամբ: Տագնապային կասկածամտու-թյունը կապված է ապագայի հանդեպ վախի հետ: Նրանք անհանգստանում են, որ իրենց հետ մի վատ բան կլինի: Շատ մաքրասեր են: Վարքի խախտումներ չեն լինում:

7. *Շիզոիդ տիպ-* Բնավորության գծերը շատ վաղ են սկսում

արտահայտվել: Մանկությունից սառն է, խոսափում է հասակակիցներից, խաղում է միայնակ: Դեռահասության շրջանում է դառնում շփվող: Շեղված վարքը բնոշ չէ:

8. *Էպիլեպտոիդային տիպ-* Հիմնական գծերն են մռայլ, չարացածություն: Դժգոհությունները լինում են երկարատև, փնտրում են մի մարդ, որի վրա կարելի է թափել չարությունը: Աֆֆեկտիվ պոռթկումից հետո երկար ժամանակ չեն կարողանում հանգստանալ: Նրանք ծնողներից պահանջում են ոչ միայն ազատություն և իրավահավասարություն, այլև նյութական բարիքները, ունեցվածքի իրենց բաժինը: Իշխելու հակումը դրսևորվում է նաև հասակակիցների խմբում, որտեղ փորձում են հաստատել կարգուկանոն և իշխել թույլերի վրա: Կռիվների ժամանակ դաժան են և ագրեսիվ: Խիստ դաստիարակության դեպքում լինում են կոկիկ,խնայող, կարգապահ:

9. *Հիստերիոիդային տիպ-*Այս տիպի երեխաները չեն սիրում, որ իրենց ներկայությամբ գովաբանում են ուրիշ երեխաների: Սիրում են հանդեսներին երգել,պարել, արտասանել: Վարքը ցուցադրական է, ձգտում են ուշադրության, բոլորը հիանան իրենով: Ներշնչվող են սուտասան: Այս դեռահասների համար ամենադժվար իրադրությունն է, երբ կորցնում են համընդհանուր ուշադրությունը: Այդ դեպքերում ինքնասպանության փորձեր են կատարում, բայց այնպես որ իրենց կյանքին վտանգ չի սպառնում: Հակասոցիալական արարքներով փորձում է ետվերադարձնել նախկին ուշադրությունը, հոգատարությունը: Չնայած ծնողների հետ շատ բախումներ են ունենում, բայց իրականում չեն ցանկանում ազատվել նրանց խնամակալությունից:

10. *Անկայուն տիպ-* Մանկությունից չլսող են, ակտիվ, վախկոտ, վախենում են պատիժներից, հեշտությամբ ենթարկվում են: Սովորել չեն ուզում հենց սկզբից դասերը պատրաստում են խիստ վերահսկողության պայմաններում: Անկայուն են, ունեն թույլ կամք: Նրանց գրավում է անգործությունը, ուրախ ժամանցը: Ոչ մի աշխատանք նրանց չի գրավում: Սիրում են զբոսնել ներգրավվել փողոցային խմբերում: Հիմնական խնդիրը շեղված վարքն է: Բնորոշ է գողությունը, խուլիգանությունը: Շատ վաղ սկսում են խմել, հակված են դեպի թմրամոլությունը: Հեշտությամբ ընկնում են ուրիշների ազդեցության տակ: Ծնողների հանդեպ անտարբեր են, նրանք միայն փողի աղբյուր են: Լավ ընկեր չեն:

11. *Կոնֆորմային տիպ-* Հիմնական գիծը դա կայունությունն է: Դժվար են հարմարվում

նոր միջավայրին: Ծնողների հետ բախում լինում է, երբ նրանք փորձում են երեխային հեռացնել հասակակիցների սովորական խմբից: Ընկնելովհակասոցիալական խմբի մեջ, այս տիպի դեռահասները հեշտությամբ սկսում են խմել, իրավախախտումներ կատարել:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, ուսումնասիրելով այս թեման, կարող ենք ասել,որ փոխադարձ շփումն ու հաղորդակցումը դեռահասների մոտ ծնում են հարգված լինելու պահանջմունքը:

Ինչ- որ տեղ օտարված լինելով մեծահասակներից դեռահասը ձգտում է հասկանալի լինել հասակակիցների շրջանում, որտեղ իրենք իրավահավասար են: Այստեղ նրանք գտնում են հուզական բարեհարմարություն: Եթե հասակակիցների խմբում դեռահասի հարգված լինելու պահանջմունքը բավարարում է, ապա նրանց զարգացումն արդյունավետ է լինում, իսկ եթե այդ խմբում գերիշխում են բացասական հուզական դիրքորոշումները, ապա դեռահասի վարքը բացասական երանգավորում է ստանում, քանի որ դեռահասությունը սենզետիվ է բացասական ներգործությունների ընկալման առումով: Դեռահասների խմբերում լինում են և մերժվածներ,և լիդերներ, և մեկուսացածներ:

Սա թեմա է, որը պետք է բոլոր ուսուցիչներին, քանի որ յուրաքանչյուր դասաժամի ընթացքում կատարվում է ոչ միայն առարկային վերաբերող աշխատանք, այլ նաև դաստիարակչական, որն իր մեջ ներառում է դեռահասի հետ կապված միշարք առանձնահատկություններ՝

ա. ձևավորել դեռահասի ինքնագիտակցությունը բ. բացահայտել սեփական ԵՍ-ը

գ. ստեղծել ճիշտ հարաբերություններ հասակակիցների հետ,

դ. մեծ ուշադրություն դարձնել տրամադրության հաճախակի փոփոխությունների վրա:

Մենք՝ նրանց դեպի գեղեցիկը տանող ճանապարհի ուղեկիցներս, մեծ անելիք ունենքվերոնշյալին հասնելու և քաղաքացի կերտելու գործում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1Роберт Кайл §Развитие ребенка от рождения до 17 лет¦Санкт-Петербург 2006, стр.640

2А. А. Реан. <<Психология человека от рождения до смерти>>Москва-2002 681стр.

3Грейс Крайг <<Психология развития>> 9-е изданиеСанкт-Петербург-2000 914стр.

4Л. Д. Столяренко <<Основы психологии>> Высшее образование Ростов-на-Дону- 2007 671стр.

5Ա.Վ.Պետրովսկի՝<<Տրիքային մանկավարժական հոգեբանություն>>

6http://www.babycenter.com/204_very-small-head-size-could-signal-problems-in-newborns_10318909.bc